



# Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

Archbishop Yerkon Mamogian, Primate

Քիւ 22422

Մարտ 10, 1970

Արժանաշնորհ  
Տ. Կիւրեղ Բնյ. Եթէնէկեան  
Հովիւ Մոնթրէալի Հայց. Եկեղեցւոյ  
եւ Նախագահ Ժիական Խորհուրդի  
Մոնթրէալ:

Սիրելի Տէր Կիւրեղ,

Ստացած ենք 1970 Մարտ 5 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Գեր.Տ. Կալէ Եպս. Յովսէփեանի նախագահութեամբ Մարտ 1ին զուամարտած Ձեր Ժիական Ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի չորս անդամոց (նաեւ երեք թեմական պատգամաւորներու) ընտրութիւնը, եւ ներկայացնելով թուէարկութեան արդիւնը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր Ժիական Ժողովը տեղի ունեցած է թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Ձեր տեղեկագրին մէջ կը յայտնէք թէ արդէն կազմած էք Ժիական Խորհուրդի նոր դիւանը: Ասիկա հակականոնական է ըստ թեմական Կանոնադրութեան 28րդ յօդուածին, ուր յստակ կ'ըսուի. — "Ժիական Խորհուրդի անդամները կը շարունակեն իրենց պաշտօնը մինչեւ իրենց յաջորդներուն Առաջնորդին կողմէ հաստատուիլ եւ պաշտօնի անցնիլը": Կը յանձնարարենք որ այս սխալը չկրկնուի:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժիական Խորհուրդի նորընտիր Դիւանի անդամոց եւ եկեղեցւոյդ ենթակայ մարմիններու ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը, ինչպէս նաեւ Ժիական Ժողովին ներկայացուած թուր տեղեկագիրները եւ հաշուեկշիռը, եւ Առաջնորդարանէն դրկուած տպագրեալ տեղեկագիրը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

Տիարք՝ Յակոբ Զավգավաթեան  
Սուրէն Թաշեան  
Սահակ Թոփալեան  
Նուկար Կապիկեան

ԹՈՐԳՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ